ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/266

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Մարտիրոսյանի (պետական գրանցման համար 278.110.03445) և ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 19.10.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.10.2021թ. թիվ 26/26-1/16899-2021 գրությամբ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 08.10.2021թ. թիվ Ե/40/2683-21 գրության հիման վրա, 15.10.2021թ. թիվ 26/26-1/16899-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է, որ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր հնարավոր և անհնարին միջոցները՝ պայմանագրով սահմանված ծառայությունները սահմանված ժամկետում (մինչև 02.10.2021թ.) իրականացնելու համար, 12.08.2021թ. պայմանագիրը կնքելուց հետո՝ Պատվիրատուն ձեռնարկում է միջոցներ տվյալ ծառայությունների կատարման համար ներգրավված մասնագետների տվյալները ԱԱԾ ներկայացնելու և մոտավորապես 50 օրվա ընթացքում ԱԱԾ-ից դրական կամ բացասական եզրակացություն ստանալու համար, նոր պատասխաններ ստանալուց հետո, տրամաբանորեն, պետք է հաշվարկվեր Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը:

Մինչ այդ բազմաթիվ անգամ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն միջնորդել է թույլատրել գոնե մի քանի մասնագետներ մուտք գործեն ծառայությունների մատուցման վայր աշխատանքները նախապատրաստելու, դրանց կատարումը սկսելու համար, սակայն ապարդյուն:

Մասնավորապես, հենց Պայմանագիրը կնքելու օրը՝ 12.08.2021թ. թիվ 003 գրությամբ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն դիմել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին, որպեսզի ՓԲԸ-ն թույլատրի «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի տնօրենին և ավագ տեխնոլոգին մուտք գործել «ՀԱԷԿ- ՓԲԸ-ի տարածք՝ աշխատանքների պլանավորման և տարածքի ուսումնասիրման նպատակով (գրության պատճենը և այն ուղարկելու փաստը հավաստող ապացույցը կցվում է):

03.09.2021թ. «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն թիվ 005 գրությամբ կրկին դիմել է «ՀԱԷԿ- ՓԲԸ-ին՝ հայտնելով, որ որպեսզի աշխատանքները հնարավոր լինի արագ սկսել և ավարտել ելնելով դրանց հրատապ կատարելու անհրաժեշտությունից, ՓԲԸ-ն թույլ տա «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի աշխատակիցներին մինչև ԱԱԾ կողմից աշխատակիցների հուսալիության ստուգման ավարտը, թույլ տալ աշխատակիցներին մուտք գործել ՓԲԸ-ի տարածք, սակայն խնդրանքը կրկին եղել է 7 ապարդյուն (գրության պատճենը և այն ուղարկելու փաստը հավաստող ապացույցը կցվում է):

«Էլդինա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ նաև մի կարևոր հանգամանք:

Պայմանագիրը կնքելուց հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պահանջեց «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին, որպեսզի վերջինս մինչև աշխատանքների կատարման սկիզբը քիմիական փորձաքննության համար ներկայացնի Պայմանագրով որպես համարժեք նախատեսված ГИПК-1100ПК կոմպոզիցիան:

Նշենք, որ նյութի փորձաքննության հնարավորություն պահանջ Պայմանագրով նախատեսված չէր:

Փորձաքննության համար նմուշները ներկայացվել են 06.09.2021թ., որից հետո ՍՊԸ-ն չի ստացել որևէ եզրակացություն տրամադրված նմուշների վերաբերյալ, այլ ընդամենը հեռախոսազանգով տեղեկացվել է, որ նմուշները չեն համապատասխանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պահանջներին:

Ոչ Ընթացակարգի հրավերով, և ոչ էլ Պայմանագրով սահմանված չեն եղել նյութի՝ կոմպոզիցիայի, ոչ մի տեխնիկական պահանջ, որից ելնելով Պատվիրատուն կարող էր անել եզրահանգում, որ նմուշները չեն համապատասխանում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի պահանջներին:

Ինչպես նաև Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրել հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին- կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ փաստել է, որ կողմերի միջև կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁՈ-34/21-03/53 ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանիորեն լուծման մասին ծանուցումը Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել www.gnumner.am կայքում «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Բավարար է ուսումնասիրել www.gnumner.am կայքի «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժինը, որպիսզի պայմաններում կհայտնաբերվի, որ այդպիսի ծանուցում այդ բաժնում ընդհանրապես առկա չէ: Այն հրապարակված է այլ բաժնում. ինչը ցույց է տալիս www. gnumner.am կայքի ուսումնասիրությունը:

Այսպիսով, գտել է, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել նաև Պայմանագրի 8.9 կետի դրույթով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում Պայմանագիր կնքած անձը չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, ըստ այդմ էլ պայմանագիրը չի կարող համարվել լուծված, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները /պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ամփոփելով վերը նշված բոլոր փաստական հանգամանքները՝ Ընկերությունը փաստել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից սույն գործի շրջանակներում թույլ են տրվել բազմաթիվ խախտումներ և խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս՝ հաշվի առնել ՍՊԸ-ի կողմից դրսևորած բարեխղճությունը և վերջինիս գործադրած ջանքերը՝ աշխատանքները որպե առաջ սկսելու և ավարտին հասցնելու համար, որոնք, ցավոք, եղել են ապարդյուն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և Ընկերության դրսևորած վարքագիծը՝ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/266 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:15-ին և 29.10.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված

նիստերի վերաբերյալ, 29.10.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստին տնօրենն ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.10.2021թ. թիվ Ե/40/2683-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար տուրբինային արտարամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման նպատակով «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. օգոստոսի 12-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի արդյունքում «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել վերոնշյալ ծառայությունը՝ 977 000 (ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.»: Տեղեկացնում ենք, որ սահմանված ժամկետում «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ ծառայությունը չի մատուցվել:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

1.1 կետի - «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ ստանձնել է տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների,

2.1.3 կետի - Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.4.1 կետ - Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

7.1 կետով սահմանված է «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից ...»:

7.6 կետով սահմանված է «Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ»:

7.8 կետով սահմանված է «Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ. ..»:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով Պայմանագրի վերը նշված դրույթները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԲ-ի միջև ս/թ օգոստոսի 12-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/266 ընթացակարգի շրջանակներում 21.10.2021թ. ժամը 09:15-ին և 29.10.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/266 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/266 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի միջև 12.08.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար տուրբինային արտադրամասի թիվ 1÷4 դրենաժային բաքերի ներքին

մակերևույթի հակակոռոզիոն շերտապատման ծառայության (հետայսու՝ Ծառայություն) մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծառայության մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, Ծառայության մատուցման ժամկետ է նշվել Ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.:

4. Նույն հավելվածի համաձայն՝ որպես լրացուցիչ պայմաններ նշվել է հետևյալը. «Ծառայություն մատուցողը պարտավոր է պայմանագրի կնքումից անմիջապես հետո Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր՝ մուտքի թույլտվություն ստանալու համար: Պատվիրատուի կողմից թույլտվությունը տրամադրվում է, միչև 50 օրացույցային օրվա ընթացքում, լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա...:

5. Պատվիրատուն «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին ուղղված 04.10.2021թ. թիվ Ε/40/2633-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման նպատակով «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. օգոստոսի 12-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել վերոնշյալ ծառայությունը՝ 977 000 (ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայության որակը, ինչը և կատարել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն՝

ստուգելով Ձեր կողմից ներկայացված նյութի որակը, որը նախատեսում էիք կիրառել ծառայության մատուցման ժամանակ:

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից պարբերաբար ներկայացվել են օգտագործվող նյութի (ГИПК-1100ПК) փորձանմուշներ, որոնք փորձաքննության արդյունքում ստացել են բացասական եզրակացություններ, իսկ եզրակացությունների արդյունքների ներկայացման պահանջ ՀԱԷԿ-ը չի ստացել, նաև Ձեր կողմից չի ստացվել առաջկություններ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.»:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

1.1 կետի - «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ ստանձնել է տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ' պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների,

2.1.3 կետի - Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.4.1 կետ - Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

7.1 կետով սահմանված է «Պայմանագիրն ուժի մեք է մտնում կողմերի ստորագրման պահից ...»:

7.6 կետով սահմանված է «Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում' պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը

լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ»: Ձեր կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի ստացել ժամկետի երկարացման վերաբերյալ գրություն:

7.8 կետով սահմանված է «Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ. ..»: Հետևաբար ս/թ սեպտեմբերի 30-ին «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ից ստացված թիվ 007 առ 29.09.2021թ գրությամբ ներկայացվող առաջարկը չի կարող ընդունելի լինել ՀԱԷԿ ՓԲԸ-ի համար:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով Պայմանագրի վերը նշված դրույթները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ օգոստոսի 12-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 05.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.10.2021թ. թիվ 26/26-1/16899-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 08.10.2021թ. թիվ Ε/40/2683-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի միջև 12.08.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53» ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար տուրբինային արտադրամասի թիվ 1÷4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատման ծառայության մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծառայության մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, Ծառայության մատուցման ժամկետ է նշվել Ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.:

«ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 12.08.2021թ. թիվ 003 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից «ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ««ՀԱԷԿ» ՓԲԸ 3Ա, 3Բ, 4Ա, 4Բ ԽՏԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ԱՌՋԵՎԻ ԵՎ ՀԵՏԵՎԻ ՋՐԱՅԻՆ ԽՑԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐևՈՒՅԹՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՇԵՐՏԱՊԱՏՈՒՄ» աշխատանքների կատարման և ՀԱԷԿ- ԳՀԾՁԲ-34/21 ծածկագրով «ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԹԻՎ 1+4 ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ԲԱՔԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐևՈՒՅԹԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՇԵՐՏԱՊԱՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՅՄԱՆ ընթացակարգերում և ունի կնքված պայմանագրեր (Պայմանագիր N 03/53, Պայմանագիր N 02/21 կնքված 11 օգոստոսի 2021թ.):

Խնդրում եմ տալ Ձեր համաձայնությունը «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդվարդ Մարտիրոսյանին (նույնականացման քարտ 000788646, տրված 15.01.2013թ.-ին 012-ի կողմից) և ավագ տեխնոլոգ՝ Արտաշես Մարտիրոսյանին (նույնականացման քարտ 000789115, տրված 15.01.2013թ.-ին 012-ի կողմից) աշխատանքների պլանավորման և տարածքի ուսումնասիրության նպատակով մուտք գործել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի վերը նշված աշխատանքային տարածքներ»:

«ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 03.09.2021թ. թիվ 005 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 12.08.2021թ. կնքվել է N 03/53 պայմանագիր (տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մասերևույթների հակակորոզիոն շերտապատում):

Տուրբինային արտադրամասի ղեկավար անձնակազմի հետ հանդիպման ընթացքում տեղեկացանք աշխատանքների կատարման անհապաղության մասին:

Ելնելով վերոնշյալից, աշխատանքները հնարավորինս արագ սկսելու և ավարտելու նպատակով, խնդրում եմ 13.09.2021-30.09.2021թթ. ժամանակահատվածում թույլատրել «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի ներքոհիշյալ աշխատակիցների և տրանսպորտային միջոցների մուտքը

ժամանակավոր անցագրերով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք (տուրբինային արտադրամաս) ուղեկցող անձի հսկողությամբ, մինչև կազմակերպության աշխատակիցների հուսալիության ստուգման ավարտը (հուսալիության ստուգման հարցաթերթիկները հանձնվել են 13.08.2021թ).

Աշխատակիցների ցանկ.

1. Մարտիրոսյան Էդվարդ Արտաշեսի - տնօրեն
2. Մարտիրոսյան Արտաշես Վլադիմիրի - ավագ տեխնոլոգ
3. Ներսիսյան Աղասի Երվանդի - բանվոր
4. Չիչյան Յուրա Միխայիլի - բանվոր
5. Գասպարյան Սամսոն Աղասիի - բանվոր
6. Հովհաննեսյան Հրայր Դիմիկի - վարպետ
7. Դանիելյան Վոլոդյա Ալեքսանի - վարպետ
8. Բարեյան Հրահատ Խաչատուրի – բանվոր

Տրանսպորտային միջոցներ.

1. Մ/ա MERCEDES-BENZ, C 200, 35 RX 518 / Վարորդ՝ Մարտիրոսյան էդվարդ
2. Մ/ա MERCEDES-BENZ, E 200, 36 AV 505 / Վարորդ՝ Չիչյան Յուրա»:

Պատվիրատուն «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին ուղղված 04.10.2021թ. թիվ Ե/40/2633-21 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման նպատակով «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. օգոստոսի 12-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել վերոնշյալ ծառայությունը՝ 977 000 (ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայության որակը, ինչը և կատարել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն՝ ստուգելով Ձեր կողմից ներկայացված նյութի որակը, որը նախատեսում էիք կիրառել ծառայության մատուցման ժամանակ:

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից պարբերաբար ներկայացվել են օգտագործվող նյութի (ГИПК-1100ПК) փորձանմուշներ, որոնք փորձաքննության արդյունքում ստացել են

բացասական եզրակացություններ, իսկ եզրակացությունների արդյունքների ներկայացման պահանջ ՀԱԷԿ-ը չի ստացել, նաև Ձեր կողմից չի ստացվել առաջկություններ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.»:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

1.1 կետի - «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ ստանձնել է տուրբինային արտադրամասի թիվ 1+4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ' պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների,

2.1.3 կետի - Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.4.1 կետ - Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

7.1 կետով սահմանված է «Պայմանագիրն ուժի մեք է մտնում կողմերի ստորագրման պահից ...»:

7.6 կետով սահմանված է «Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում' պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ»: Ձեր կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի ստացել ժամկետի երկարացման վերաբերյալ գրություն:

7.8 կետով սահմանված է «Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ. ..»: Հետևաբար ս/թ սեպտեմբերի 30-ին «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-

ից ստացված թիվ 007 առ 29.09.2021թ գրությամբ ներկայացվող առաջարկը չի կարող ընդունելի լինել ՀԱԷԿ ՓԲԸ-ի համար:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով Պայմանագրի վերը նշված դրույթները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ օգոստոսի 12-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 05.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա նյութերը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Ընկերությանն ուղղված 04.10.2021թ. թիվ Ե/40/2633-21 ծանուցման համաձայն՝ Պայմանագիրը լուծել է Պայմանագրի 2.1.3-րդ կետի բ) ենթակետի հիմքով, այն է՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, որպես լրացուցիչ պայման նշվել է հետևյալը. «Ծառայություն մատուցողը պարտավոր է պայմանագրի կնքումից անմիջապես հետո Պատվիրատուի ղեկավարությանը ներկայացնի համապատասխան փաստաթղթեր՝ մուտքի թույլտվություն ստանալու համար: ***Պատվիրատուի կողմից թույլտվությունը տրամադրվում է, միչև 50 օրացույցային օրվա ընթացքում***, լիազոր մարմնի (ՀՀ Կառավարությանն առընթեր ԱԱԾ) կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա...:

Այսինքն՝ համաձայն Պայմանագրով ամրագրված վերը նշված պայմանի՝ Ընկերությունը Պատվիրատուի կողմից պայմանագրի կնքումից հետո մինչև 50 օրացույցային օրվա ընթացքում տրամադրված թույլտվության դեպքում (ԱԱԾ-ի կողմից տրամադրված հուսալիության դրական եզրակացության հիման վրա), նոր միայն կարող էր մուտք գործել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք և սկսել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը:

Մինչդեռ՝ գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ **Պատվիրատուի կողմից չի տրամադրվել վերը նշված թույլտվության վերաբերյալ որևէ տեղեկատվություն, որի պայմաններում միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի միակողմանի լուծման հիմքի, այն է՝ 2.1.3-րդ կետի բ) ենթակետի՝ ծառայության մատուցման ժամկետը խախտելու հիմքով լուծելու իրավաչափության հարցը, քանի որ տվյալ դեպքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը սկսելու ժամկետի հոսքը պայմանավորված է Պատվիրատուի կողմից Ընկերությանը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարածք մուտք գործելու թույլտվությունը տրամադրելով:**

Այսպիսով՝ Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Քաղաքացիական օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով

պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերը նշված իրավակարգավորումները ցույց են տալիս, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում ծառայությունները չմատուցելու փաստը, Ընկերության մեղքով պայմանավորված հիմքի առկայությունը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.10.2021թ. թիվ 26/26-1/16899-2021 գրությամբ «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**